ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 08.11.2021թ. N 776/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.11.2021թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում: Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ռ.Կուսիկյանը, Լ.Նալբանդյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ռ.Գրիգորյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

-«Դանիամ» ՍՊԸ (ք.Երևան, Նար Դոսի-73, բն-36)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			Պլանավորված առավելագույն ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Դանիամ» ՍՊԸ	ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ	233 332 500	20%	279 999 000	80 000 000

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից հայտով ներկայացրած գինը գերազանցում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված առավելագույն գինը՝ գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգը մասնակցի հայտը մերժել է:

2. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյան

Անդամներ՝ Ռ.Կուսիկյան

Լ.Նալբանդյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան